DOI: 10.54503/978-9939-9312-5-8-332

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ՝ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՍՐՄԱՆ ՊԱՏՃԱՌ

ԼԻԱՆԱ ԱԶԱՏՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Ներածություն: Պարենային անվտանգությունը ցանկացած պետության ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչներից է, որը ուղղված է քաղաքացիների բավարար քանակությամբ և անհրաժեշտ որակի լիարժեք պարենով ապահովմանը և պետք է հասանելի լինի ցանկացած իրավիճակում: Պարենային անվտանգությունը հիմնականում ապահովվում է գյուղատնտեսության, սննդամթերքի արտադրության և սննդի ներմուծման համակարգերի զարգացման միջոցով: Հատկապես պետք է ուշադրություն դարձնել կենսական կարևոր նշանակություն ունեցող ապրանքների արտադրության ծավալների ավելացմանը: Միջազգային պրակտիկայում երկրների պարենային անվտանգության դիրքը գնահատվում է պարենային անվտանգության գլոբալ ինդեքսով, որը բաղկացած է 3 բաղադրիչից՝ պարենամթերքի մատչելիություն, հասանելիություն, որակ և անվտանգություն: Հայաստանում արտաքին և ներքին միգրացիան իր բացասական ազդեցությունն է ունենում երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի, այդ թվում ագրարային ոլորտի վրա: Ներքին միգրացիայի արդյունքում ավելանում է անմշակ հողատարածությունների քանակը:

Խնդրի լուծման համար անհրաժեշտ է պարենի տեղական կայուն արտադրություն, սննդամթերքի պահուստների կարողությունների հզորացում և ապրանքների մատակարարման շղթաների արդյունավետության բարձրացում: Սույն խնդրի կարևորությամբ է պայմանավորված **թեմայի ընտրության արդիականությունը**:

Հոդվածի հիմնական **նպատակն** է ուսումնասիրել պարենային անվտանգության ներկա վիճակը, խնդրի վրա ազդող այնպիսի գործոնները ինչպիսին է միգրացիան.

- Ուսումնասիրվել է պարենային անվտանգության ապահովման հիմնական խնդիրները,
- Պարենային անվտանգության ապահովման վրա ազդող գործոնները,
- Միգրացիայի ազդեցությունը պարենային անվտանգություն վրա,
- Ուսումնասիրության արդյունքում տրվել են եզրակացություններ և առաջարկություններ:

Գրականության ակնարկ: Լ. Նայկեն «FAO մեթոդաբանություն՝ թերսնման տարածվածության գնահատման համար» հոդվածում անդրադարձ է կատարում պարենային անվտանգությանը և թերսնման տարածվածության գնահատման համար օգտագործվող մեթոդաբանության և տվյալների ընդհանուր նկարագրությանը: Ելնելով սննդի էներգետիկ պահանջի նորմերից, այն սահ-

մանվում է որպես նույն տարիքի, սեռի, մարմնի քաշի և ակտիվության անհատների խմբերի միջին արժեք: Սակայն անհատների էներգետիկ պահանջարկի մեջ կան տարբերություններ: Քանի որ հնարավոր չէ որոշել յուրաքանչյուր անհատի էներգիայի օգտագործման արդյունավետությունը, անհատի կոնկրետ էներգետիկ պահանջարկի շեղումը միջինից հայտնի չէ:[1]

Ա. Մարկոսյանը և Մ. Պետրոսյանը պարենային անվտանգության համար կարևորել են ագրոպարենային համակարգի վերարտադրական ամբողջականության երաշխավորվածությունը, որում կարևոր դեր ունի ագրոարդյունաբերական համակարգի արդյունավետ կառուցվածքի ձևավորումը[2]:

Ս. Ավետիսյանը անդրադարձել է ՀՀ-ում պարենային անվտանգության հրատապ խնդիրներին: Նա նշում է, որ պարենային ապահովումը 21-րդ դարում կարևորագույն խնդիր է և պետության անկախության հիմնական չափանիշը 80%-ով սեփական արտադրությամբ պահանջարկի բավարարումն է: Այս ուղղությամբ ՀՀ-ում նույնպես տարվում են աշխատանքներ, սակայն դեռևս առկա են որոշակի խնդիրներ[3]:

Զ.Վ. Գերասիմչուկը անդրադառնալով խնդրին նշում է, որ պարենային անվտանգություն հասկացությունը նոր իմաստ է ստացել և պահանջում է բացահայտում՝ կարևորելով շուկայական տնտեսության տնտեսական կատեգորիայի էությունը և հետազոտության մեթոդաբանությունը տարածաշրջանային մակարդակում[4]:

Տ.Վ. Ուսկովը, Ռ.Յու. Սելիմենկովը և այլոք կարևորում են բնակչության բնականոն գործունեության համար պարենային կարիքների անհրաժեշտ քանակությամբ բավարարումը՝ տվյալ երկրի ներքին արտադրության միջոցներով[5]:

Իսպանացի հետազոտողներ Ռ. Ռամիրեսը և այլոք նշում են, որ պարենային անվտանգությունը, հատկապես վերջին տարիներին, համաշխարհային

---

[1] Loganaden Naiken - FAO methodology for estimating the prevalence of undernourishment. https://www.fao.org/4/y4249e/y4249e06.htm

[2] Մարկոսյան Ա., Պետրոսյան Մ. – ՀՀ պարենային անվտանգության արդի հիմնահարցերը, «21-րդ ԴԱՐ», թիվ 6 (34) 2010թ., 100 էջ, էջ 61, https://cyberleninka.ru/article/n/sovremennye-problemy-prodovolstvennoy-bezopasnosti/viewer

[3] Ավետիսյան Ս. - Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրներ/ –Եր.: Տնտեսագետ, 2014 – 96 էջ.- («Ամբերդ» մատենաշար):էջ 5,41,43, ISBN 978-9939-61-091-7 https://usum.am/_ld/33/3335_Avetisyan_S.pdf

[4] Герасимчук З, доктор экономических наук, профессор, ТЕОРЕТИЧЕСКИЕ ОСНОВЫ ПРОДОВОЛЬСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ, 2019, 240 стр, стр 163, ISSN 2312-5330 file:///C:/Users/User/Downloads/teoreticheskie-osnovy-prodovolstvennoy-bezopasnosti.pdf

[5]. Ускова Т.В, Селименков Р.Ю., Анищенко А.Н., Чекавинский А.Н. -Продовольственная безопасность региона ВОЛОГДА 2014, 102 стр, стр 5, ISBN 978-5-93299-258-6 http://library.vscc.ac.ru/Files/books/1401964240PRODOVOL_STVENNAY%20BEZOPASNOST_.PDF

տնտեսության օրակարգի ամենակարևոր հարցերից մեկն է: Այն պայմանավորված է աշխարհում բնակչության աճով, քաղաքայնացմամբ և կլիմայի փոփոխություններով[6]:

Մ. Ապանովիչը իր «Միգրացիան որպես զարգացման գործոն» հոդվածում կարևորում է գյուղական աղքատության կրճատման անմիջական կապը կրթական մակարդակի բարձրացման և գյուղ – քաղաք միգրացիայի համատեքստում: Հոդվածում անդրադարձ է կատարվում է հատկապես աղքատության բարձր մակարդակ ունեցող բնակավայրերում կենսապայմանների բարելավման կարևորությանը, շուկաներում ֆերմերների մուտքի ապահովմանը, պարենային համակարգերի տարածքային ամրապնդմանը և այլն[7]:

Անդրադառնալով պարենային անվտանգության խնդիրներին իր «Աշխարհի երկրների բնակչության պարենային ապահովումը և պարենային անվտանգությունը փոփոխվող աշխարհակարգի համատեքստում. կառավարման ասպեկտներ» հոդվածում նշվում է, որ բնակչությանը սննդամթերքով ապահովելը յուրաքանչյուր պետության խնդիրն է: Սակայն շատ երկրներում այս խնդիրը մեծապես կախված է պետությունների միջև առկա արտահանման-ներմուծման գործընթացից: Հետևաբար՝ անհրաժեշտ է երկարաժամկետ ժամանակահատվածի համար մշակել կառավարող և իրավական դրույթներ՝ պարենային անվտանգության ապահովման առումով[8]:

Քարիլ-Կաչչա Ֆ., Ջ. Պանիագուա և Մ. Սուարես-Վարելա «Հարկադիր միգրացիա և պարենային ճգնաժամ» աշխատությունում անդրադառնալով խնդրին նշում են, որ միգրացիայի մասին մարդիկ մտածում են միայն այն դեպքում, երբ իրենց նպատակակետում ակնկալում են ավելի բարձր մակարդակի բարեկեցություն: Սակայն հայտնի է, որ միգրացիան ենթադրում է դրամական ծախսեր, որոնց անբավարար քանակը կսահմանափակի միգրացիայի հնարավորությունը[9]:

Մեթոդաբանություն: Ուսումնասիրությունները իրականացվել են ոլորտի ուսումնասիրության, նկարագրական, վերլուծական, վիճակագրական տվյալ-

---

[6] RAMIREZ, Roberth F. VARGAS, Pablo L. CARDENAS, Olimpo S. La seguridad alimentaria: una revisión sistemática con análisis no convencional, 2020, página 320 https://revistaespacios.com/a20v41n45/a20v41n45p25.pdf

[7] Apanovich, M. (2020). Migration as a Factor of the Development: from the global openness to the local barriers. *Contemporary Europe*, *100*(7), 124–131. https://doi.org/10.15211/soveurope72020124131

[8] Holdoenko, A. M. (2024). Food supply and food security of the world's population in the conditions of changing world order: Management aspects. *Administrative Consulting*, *6*, 196–202.

[9] Каррил-Качча, Ф., Х. Паниагуа и М. Суарес-Варела (2022 г.). «Вынужденная миграция и продовольственный кризис» https://www.suerf.org/publications/suerf-policy-notes-and-briefs/forced-migration-and-food-crises/

ների ուսումնասիրության մեթոդներով: Արդյունքում ներկայացվել են առաջարկություններ:

Վերլուծություն: Յուրաքանչյուր երկրի պարենային անվտանգությունը համարվում է ապահովված, եթե առկա է տնտեսության այնպիսի մակարդակ, որն երաշխավորում է բնակչության համար առողջապահական նորմերին համապատասխանող սննդամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիությունը[10]:

Պարենային անվտանգության ապահովումը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության կարևոր խնդիրներից է, քանի որ ՀՀ չունի ելք դեպի ծով, ունի արտաքին հաղորդակցության ուղիների սահմանափակումներ և բնակչության կեսից ավելին պարենային անապահովության վտանգի տակ է:

2023թ –ի հունիսի վերջին Կառավարությունը հաստատեց Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը և 2023 - 2026 թվականների գործողությունների ծրագիրը: Ռազմավարության հիմնական նպատակներից են՝ պարենային անվտանգության, հատկապես կարևոր պարենային ապրանքների ինքնաբավության մակարդակի բարձրացումը, նյութական պահուստի պաշարների համալրումը, ինչպես նաև բնակչության համար ֆիզիոլոգիական նվազագույն նորմերին համապատասխանող սննդի ձեռքբերման տնտեսական հնարավորությունների ապահովումը[11]:

ՀՀ պարենային անվտանգության ապահովման հիմնական խնդիրներն են՝

- սննդամթերքի ինքնաբավության, անվտանգության և որակի ապահովումը,
- սննդամթերքի մատչելիության ապահովումը,
- բարձր սննդային արժեքով պարենի ապահովումը,
- պարենային ռեսուրսների արդյունավետության բարձրացումը,
- բնական պաշարների հավասարակշռված օգտագործումը, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների նվազեցումն ու կանխարգելումը:

Պարենային անվտանգության ծրագրի նպատակն է ապահովել բնակչության բոլոր խմբերի համար նվազագույն պարենային զամբյուղի հասանելիություն:

Քանի որ պարենային անվտանգությունը ապահովող հիմնական ոլորտը գյուղատնտեսությունն է, ապա ՀՀ-ում պարենային անվտանգության ներկա վիճակի մասին պատկերացում ունենալու համար ստորև բերված աղյուսակ 1-ում

---

[10] ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, https://www.mineconomy.am/page/1333

[11] ՀՀ Կառավարության որոշում «Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը և 2023-2026թ. գործողությունների ծրագիրը հաստատելու մասին », 29 հունիսի 2023 թվականի N 1083-Լ, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=179892

ներկայացված են վերջին տարիների տվյալներ՝ առաջնային կարևորության մշակաբույսերի վերաբերյալ։

Աղյուսակ 1.

Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի տարածությունները և համախառն բերքը[12]

	Տարածությունը (1000 հա.)					Համախառն բերքը (1000 տոննա)				
	2020	2021	2022	2023	2024	2020	2021	2022	2023	2024
Հացահատիկային և հատիկաընդեղենայի ն մշակաբույսեր	121,7	124,9	114,4	127,1	116,4	246,1	153,2	241,9	290,6	218,3
Կարտոֆիլ	20,5	20,1	19,3	18,7	17,5	437,2	364,6	351,4	364,5	337,7
Բանջարանոցային մշակաբույսեր	21,3	19,5	19,1	18,0	18,3	692,8	619,6	610,6	607,5	649,3
Բոստանային մշակաբույսեր	4,0	4,5	4,1	4,0	3,9	126,6	131,8	124,5	116,6	122,7
Պտուղ, հատապտուղ	43,8	44,7	45,0	46,2	47,9	274,3	323,0	346,3	361,2	341,4
Խաղող	16,7	16,5	16,2	15,6	15,4	283,2	237,1	225,8	213,4	195,8

Աղյուսակ 2.

Նվազագույն սպառողական զամբյուղ (կգ, հատ) 2019թ.[13]

	Օրական սպառման նորման կգ.	Օրական փաստացի սպառումը կգ.
Հացամթերք	0,335	0,46
Մսամթերք (տավարի միս)	0,1	0,05
Ձուկ	0,03	0,02
Կաթնամթերք	0,255	-
Ձու (հատ)	0,5	0,18
Բուսական յուղ	0,02	0,3
Միրգ (խնձոր)	0,2	0,1
Բանջարեղեն	0,3	0,2
Կարտոֆիլ	0,25	0,14
Շաքար	0,25	0,24

Աղյուսակի տվյալներից երևում է, որ 2021թ.-ին 2020թ.- համեմատ հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր ցանքատարածությունը ավելացել է, սակայն համախառն բերքը նվազել է, որը կապված է եղել երաշտի հետ։

[12] ՎԿ Պարենի առկայություն, էջ 39, https://armstat.am/file/article/f_sec_4_2024_3.pdf

[13] Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը, 26 Օգոստոսի 2024 https://armstat.am/am/?nid=157&id=1075

Աղյուսակ 2-ում ներկայացված է նվազագույն զամբյուղում ընդգրկված մթերքների սպառման նորմերը և փաստացի սպառման տվյալները:

Աղյուսակ 2-ի տվյալներից երևում է, որ վերոնշյալ մթերքների մեծ մասի փաստացի սպառման ցուցանիշները ցածր են օրական սպառման ցուցանիշնե-րից, որը կապված է բնակչության ցածր եկամուտների հետ:

Աղյուսակ 3.

Առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների ինքնաբավությունը և քանակը՝ մեկ շնչի հաշվով 2020-2024թթ.[14]

	2020		2021		2022		2023		2024	
	Ինքնաբավության մակարդակը%	Մեկ շնչի հաշվով կգ/տ	Ինքնա-բավության մակարդակը%	Մեկ շնչի հաշ-վով կգ/տ	Ինքնաբավության մակարդակը%	Մեկ շնչի հաշվով կգ/տ	Ինքնաբավության մակարդակը%	Մեկ շնչի հաշվով կգ/տ	Ինքնաբավության մակարդակը%	Մեկ շնչի հաշվով կգ/տ
Ցորեն	24,4	139,1	23,2	129,6	24,4	135,5	27,9	138,2	22,8	133,9
Կարտոֆիլ	101,1	64,8	111,7	65,8	98,4	69,4	99,2	65,1	106,2	63,4
Բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր	103,9	195,5	105,6	194,6	102,0	204,1	97,4	200,8	99,6	206,2
Միրգ, հատապտուղ	98,2	94,5	114,4	92,3	102,0	118,9	103,1	114,4	100,5	115,1
Խաղող	108,0	4,5	106,7	4,3	106,6	4,6	106,6	4,3	103,7	4,2
Բուսական յուղ	0,9	11,1	0,6	10,2	0,1	10,6	0,0	10,5	0,0	11,2
Շաքար	38,0	27,1	33,9	24,4	91,2	25,8	42,8	24,9	55,0	27,1
Ձու	100,3	14,1	98,8	13,4	99,2	14,7	98,8	13,7	98,9	13,4
Կաթ	82,0	258,0	87,7	247,1	83,4	259,2	80,2	239,3	78,6	235,2
Տավարի միս	87,3	27,9	92,2	26,7	89,7	26,4	90,7	23,7	88,0	23,9
Խոզի միս	45,1	12,4	53,2	10,5	47,3	11,7	48,0	11,2	49,7	13,1
Թռչնի միս	23,9	18,9	26,7	19,5	25,3	20,7	25,4	19,7	26,0	21,1
Ձուկ	148,4	4,4	143,7	4,6	148,0	5,7	136,8	5,9	118,8	7,2

[14] ՎԿ Պարենային ապահովություն և աղքատություն, 2020թ. - 2024թ., https://armstat.am/am/

Ինքնաբավությունը երկրի պարենային անվտանգությունը գնահատող կարևոր ցուցանիշ է: Առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների ինքնաբավության մակարդակը և մեկ շնչի հաշվով պարենի քանակը ներկայացված է աղյուսակ 3-ում:

ՀՀ Վիճակագրական կոմիտեի տվյալների ուսումնասիրության համաձայն ցորենի ինքնաբավության ցուցանիշը ամենացածրը եղել է 2021թ.-ին հասնելով 23,2%, ամենաբարձրը՝ 2023թ.-ին՝ 27,9%:

2024 թվականի տվյալներով՝ 2020թ.-ի նկատմամբ նվազել է բանջարեղենի, ձվի, կաթի, ձկան քանակը, իսկ աճ են գրանցվել ցորենի, մրգերի և մսամթերքների ցուցանիշներում:

Նշված ժամանակահատվածում շաքարի ինքնաբավության աճի և նվազման պատկերը նույնպես տարբեր է, այս ապրանքատեսակն ամենից բարձր աճ գրանցել է 2022թ.-ին՝ 91,2%, որը պայմանավորված է եղել ներկրված հումքի հաշվին շաքարավազի տեղական արտադրության ծավալների ավելացմամբ, իսկ 2023թ.-ին այն մոտ 50%-ով նվազել է՝ հասնելով 42,8%, որը պայմանավորված է ներկրված շաքարավազի ցածր ինքնարժեքով:

Վերոնշյալ ցուցանիշներից պարզ է դառնում, որ ՀՀ-ում ինքնաբավության մակարդակը բարձր է հետևյալ ապրանքների համար՝ կարտոֆիլ՝ 99,2%, բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր՝ 97,4%, միրգ և հատապտուղ՝ 103,1%, խաղող՝ 106,6%, ձու՝ 98,8%, ձուկ՝ 136,8%: Ինչ վերաբերում է առաջին անհրաժեշտության պարենային մյուս ապրանքներին, Հայաստանն ինքնաբավ չէ և կախված է ներմուծումից: Հատկապես պետք է ուշադրություն դարձնել կենսական կարևոր նշանակություն ունեցող այնպիսի ապրանքների արտադրության ծավալների ավելացմանը ինչպիսիք են ցորենը, բուսական յուղը, շաքարը, խոզի և թռչնի միսը:

Ինչպես հայտնի է ՀՀ-ում վարելահողերի մոտ 50%-ը չի մշակվում: Նման պայմաններում պարենային ինքնաբավության անհրաժեշտ մակարդակին հասնելու համար անհրաժեշտ է արդիականացնել գյուղատնտեսության տեխնոլոգիաները: Պետք է ներդնել բարձր բերքատու, հիվանդությունների, վնասատուների, երաշտի նկատմամբ դիմացկուն սորտեր, բարձրացնել ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը: Տվյալ միջոցառումները պետք է ուղեկցվեն պետական սուբսիդիաներով՝ նպատակաուղղված ցանքատարածքների ընդլայնմանը: Բացի այդ, կարևորվում է բարձր արտադրողականությամբ գյուղատնտեսական կենդանիների ցեղատեսակների ներմուծումն ու բուծումը, վարակիչ հիվանդությունների կանխարգելման և կենսանվտանգության համակարգերի ուժեղացումը, ինչպես նաև կայուն կերային բազայի ձևավորումը: Ոլորտի կայուն զարգացման համար առանցքային նշանակություն ունի պետական աջակցությամբ գիտական հետազոտությունների խթանումը, տեխնոլոգիական նորարարությունների ներդրումը, ինչպես նաև գյուղատնտեսական կրթական ծրագրերի և խորհրդատվական ծառայությունների զարգացումը:

ՀՀ-ում պարենային անվտանգության խնդիրների վրա իր զգալի ազդեցությունը ունի արտաքին և ներքին միգրացիան:

Առանձին վարչա-տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունների բերումով ձևավորվել էին “գյուղից-քաղաք”, “ծայրամասերից-կենտրոն”, “փոքր քաղաքից-մեծ քաղաք”, “բարձր լեռնային շրջաններից-հարթավայր” ուղղվածության բնակչության ներհոսքեր, որոնք ուղեկցվում էին երկրի տարաբնակեցման համակարգի անհամամասնությունների խորացմամբ: Հատկապես անհանգստացնող էին ծայրամասային ու բարձր լեռնային շրջանների, փոքր գյուղերի մարդաթափման միտումները և փոքր ու միջին քաղաքների բնակչության տեսակարար կշռի նվազման միտումը, ու դրանց արդյունքում Երևանի բնակչության բացարձակ և հարաբերական մեծությունների առաջանցիկ աճի միտումը[15]:

2023թ. արտերկիր մեկնած միգրանտների թիվը կազմել է 100.821 մարդ, որոնցից աշխատելու նպատակով 64916 մարդ: Ըստ 2021-2023թթ.-ի միգրացիոն հոսքերի ծավալի, Երևան քաղաքից միգրացիան կազմել է 12637, իսկ մարզերից 22461 մարդ[16]:

Ըստ Վիճակագրության տվյալների Հայաստան ժամանած և կացության կարգավիճակ ստացած օտարերկրյա քաղաքացիների քանակը 2022թ-ին կազմել է 16659 մարդ, գերազանցելով 2021թ.-ի՝ 8639 և 2023թ.-ի՝ 8761 քաղաքացի, տվյալներին: Սա պայմանավորված է ՌԴ և Ուկրաինայի միջև հատուկ ռազմական օպերացիայով, քանի որ ՌԴ-ից 2022թ. Հայաստան ներգաղթել են 8660 քաղաքացի, այն դեպքում, որ 2021թ. և 2023թ. քանակը համապատասխանաբար եղել է՝ 1487 և 3350:

ՀՀ-ում միգրացիոն հոսքերի ցուցանիշում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են կազմում նաև Հնդկաստանից քաղաքացիների հոսքերը՝ 2021թ. 2182, 2022թ. 2212 և 2023թ. 2035 քաղաքացի[17]:

2023թ.-ին Արցախից բռնի տեղահանվածների քանակը եղել է ավելի քան 100 հազար[18]:

---

[15] Վարդանյան Ա., Եզանյան Ռ. և այլոք - ՀՀ միգրացիոն իրավիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտության միջոցով, 2013թ., 144էջ, էջ 14 https://files4.webydo.com/45/452723/UploadedFiles/7926b382-53f6-4128-8dbb-cacc8e6a8ff9.pdf

[16] Միգրացիոն պատկերը ՀՀ-ում, 2023 թ., 30 էջ, էջ 11, https://armstat.am/file/article/migration_profile_2023_am_.pdf

[17] ՀՀ-ում կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների բաշխումն ըստ քաղաքացիության երկրի և կացության արգավիճակի տեսակի, էջ 53, https://armstat.am/file/doc/99552283.pdf

[18] Զ Ե Կ ՈՒ Յ Ց ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ (2021-2026 ԹԹ.) 2023 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ, Հավելված ՀՀ կառավարության 2024 թվականի փետրվարի 23-ի N 266 - Ա որոշման, 108 էջ, էջ 3, https://www.gov.am/files/docs/5659.pdf

Ռուսաստանից ժամանած քաղաքացիների աշխատանքային գործունեությունը հիմնականում կապված չէ ագրարային ոլորտի հետ, ի տարբերություն Հնդկաստանից ժամանածների, որոնց մի մասը զբաղված է գյուղատնտեսության ոլորտում: Միգրանտների նման հոսքի արդյունքում ունենում ենք ապրանքների՝ հատկապես պարենամթերքի սպառման աճ:

Ներքին միգրացիայի նպատակը սեփական երկրում տեղաշարժի միջոցով աշխատանք գտնելն է, որը կապահովի կյանքի որակի բարելավում և այն կազմում է ընդհանուր միգրանտների 25.3 %-ը[19]:

Հայաստանում ներքին միգրացիան իր բացասական ազդեցությունն է ունենում երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի՝ մասնավորապես ագրարային ոլորտի վրա: Քանի որ ներքին միգրացիան պայմանավորված է Երևանի տնտեսական դերի և նշանակության մեծացմամբ, անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել մարզերում ժողովրդագրական ցուցանիշները, ամսական աշխատավարձի քանակը, գործազրկությունը և այլն:

Ստորև բերված աղյուսակում ներկայացրել ենք ՀՀ-ում բնակչության քանակի բաշխումը ըստ մարզերի քաղաքների և գյուղերի:

Աղյուսակ 4.

Մշտական բնակչության թվաքանակը ՀՀ-ում 2024թ.[20]

1000 մարդ

	Ամբողջ բնակչությունը	Քաղաքային	Գյուղական
Հայաստանի Հանրապետություն	2991,2	1915,3	1075,9
Երևան	1106,3	1106,3	-
Արագածոտն	131,8	27,2	104,6
Արարատ	255,5	71,1	184,4
Արմավիր	259,7	83,7	176,0
Գեղարքունիք	213,2	67,6	145,6
Լոռի	226,3	126,9	99,4
Կոտայք	278,1	151,7	126,4
Շիրակ	238,9	136,9	102,0
Սյունիք	116,4	78,3	38,1
Վայոց ձոր	48,5	16,9	31,6
Տավուշ	116,5	48,7	67,8

Աղյուսակ 4-ի տվյալներից երևում է, որ որոշ մարզերում (Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք) քաղաքային բնակչության թիվը գերազանցում է գյուղականին

[19] Միգրացիոն պատկերը ՀՀ-ում, 2023 թ., էջ 11, https://armstat.am/file/article/migration_profile_2023_am_.pdf

[20] Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2024, Բնակչություն, էջ 22, https://armstat.am/file/article/marzer_2024_4.pdf

բնակչության թվին, որը համարվում է գյուղատնտեսական մթերքներ արտադրող և սպառող, իսկ քաղաքային բնակչության մեծ մասը՝ սպառողներ: Համապատասխանաբար գյուղից քաղաք միգրացիայի արդյունքում ավելանում է ոչ միայն սպառողների քանակը, այլ նաև չմշակվող հողատարածությունները, ինչը հանգեցնում է գյուղատնտեսության արդյունավետության անկմանը և պարենային անվտանգության խնդիրների ավելացմանը:

2023թ. Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքների համաձայն, 2021-2023թթ. ընթացքում, ընդհանուր հաշվով, միգրացիոն տեղաշարժերում ընդգրկված են եղել տնային տնտեսությունների 237.7 հազար անդամներ: ՏՏԿԱՀ-ի արդյունքներով արձանագրվել է, որ նշված ժամանակահատվածում, նրանցից շուրջ 100.8 հազար մարդ (42.4%) մեկնել են իրենց բնակավայրերից և չեն վերադարձել (մեկնածներ), տնային տնտեսությունների 58.8 հազար անդամներ (24.7%) վերադարձել են մեկնումներից, իսկ 78.1 հազար մարդ (32.9%) եղել են տվյալ բնակավայր նոր ժամանածներ: Հետազոտված ժամանակահատվածում տնային տնտեսությունների միգրանտ անդամներից շուրջ 60.2 հազար մարդու (25.3 %) տեղաշարժը եղել է ներքին՝ հանրապետության տարածքում[21]:

Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության իրագործման նպատակն է.

- կենսական առաջնահերթ ապրանքների տեղական արտադրության անհրաժեշտ քանակի ապահովումը,
- ներմուծվող ապրանքների քանակի ապահովումը,
- բնակչության բոլոր խավերի համար սննդամթերքի անվտանգության ապահովումը:

Խնդրի լուծման համար անհրաժեշտ է պարենի տեղական կայուն արտադրություն, պատրաստի սննդամթերքի կորուստների կրճատում, պարենապահովման և սննդամթերքի բաշխման համակարգի մշակում և ներդրում, սննդամթերքի պահուստների կարողությունների հզորացում և ապրանքների մատակարարման շղթաների արդյունավետության բարձրացում:

ՀՀ-ում պարենային անվտանգության ցուցանիշների և միգրացիայի փոխազդեցությունների քանակական մեթոդների կիրառմամբ գնահատում չի կիրառվել, քանի որ.

- ՀՀ ՎԿ կողմից հրապարակվող համապատասխան ցուցանիշները տարեկան են, սակայն ուսումնասիրվող երևույթը (ռուս-ուկրաինական պատերազմի, Արցախից հայության ներհոսքի և գյուղից քաղաք միգրացիայի հետևանքով առաջացող միգրացիոն հոսքեր) ունեն 3 տարվա տևողություն, իսկ 3

[21] Միգրացիոն պատկերը ՀՀ-ում, 2023 թ., էջ 5, https://armstat.am/file/article/migration_profile_2023_am_.pdf

տարվա տվյալներով արժանահավատ քանակական գնահատումներ (կոռելյացիա, ռեգրեսիա և այլն) հնարավոր չէ իրականացնել:

- Քանակական գնահատումների համար անհրաժեշտ են առնվազն եռամյակային կամ ամսական տվյալներ՝ կոռելյացիոն կամ ռեգրեսիոն վերլուծություններում դիտարկումների պատշաճ թվաքանակ ապահովելու համար, սակայն պաշտոնական վիճակագրությունը նմանատիպ ցուցանիշներ չի հրապարակում:

Այս հանգամանքներով պայմանավորված կոռելյացիոն կամ ռեգրեսիոն վերլուծություն իրականացնելը անհնար է, և հետազոտությունում դրանք չի կիրառվել:

Եզրակացություն: Քանի որ Հայաստանը երկար տարիներ գտնվում է շրջափակման մեջ, այն դժվարացնում է մթերքների և այլ ապրանքների արտահանման ու ներմուծման հնարավորությունները: Պարենային անվտանգության տեսանկյունից ՀՀ բնակչությանը պարենով ապահովման համար անհրաժեշտ է իրականացնել պարենի տեղական կայուն արտադրություն, ներմուծման հաշվին պակասորդի լրացում, պարենի պահուստների ձևավորման կարողությունների հզորացում, ապրանքների մատակարարման շղթաների արդյունավետության բարձրացում: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այնպիսի ապրանքների արտադրության և ներմուծման ծավալների ավելացմանը ինչպիսիք են ցորենը, բուսական յուղը, շաքարը, խոզի, թռչնի միսը և այլն:

Պարենային անվտանգությունը ապահովում է՝ ագրոպարենային համակարգի զարգացումը, սննդամթերքի ինքնաբավության ապահովումը, բնակչությանը լիարժեք սննդով ապահովելը, տարածքային համաչափ զարգացումը, որը ապահովում է պարենային ռեսուրսների արդյունավետության կառավարումը և այլն:

ՀՀ-ում պարենային անվտանգության խնդիրների վրա իր զգալի ազդեցությունն ունի արտաքին և ներքին միգրացիան: Ներքին՝ գյուղից քաղաք միգրացիան հանգեցնում է գյուղատնտեսության արդյունավետության անկմանը, ազդելով և' վարչատարածքային միավորների և' ընդհանուր տնտեսության զարգացման միտումների վրա: Գյուղերում բնակչության ամրագրման վրա են ազդում սեզոնայնության հաղթահարումը, զբաղվածության դիվերսիֆիկացումը, սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների մեղմումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության տնտեսական նախարարություն. (n.d.). Պարենային անվտանգություն. https://www.mineconomy.am/page/1333
2. Հայաստանի Հանրապետության տնտեսական նախարարություն. (n.d.). ՎԿ պարենային անվտանգություն. https://www.mineconomy.am/page/1333

3. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե. (2020–2024). ՎԿ պարենային ապահովություն և աղքատություն. https://armstat.am/am/
4. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե. (2023). Միգրացիոն պատկերը ՀՀ-ում (էջ 11). https://armstat.am/file/article/migration_profile_2023_am_.pdf
5. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե. (2024). ՎԿ պարենի առկայություն (էջ 39). https://armstat.am/file/article/f_sec_4_2024_3.pdf
6. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե. (2024, օգոստոսի 26). Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը. https://armstat.am/am/?nid=157&id=1075
7. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե. (2024). Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով: Բնակչություն (էջ 22). https://armstat.am/file/article/marzer_2024_4.pdf
8. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե. (n.d.). ՀՀ-ում կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների բաշխումն ըստ քաղաքացիության երկրի և կացության կարգավիճակի տեսակի (էջ 53). https://armstat.am/file/doc/99552283.pdf
9. Ավետիսյան, Ս. (2014). Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրներ (96 էջ). Երեւան: Տնտեսագետ.
10. https://usum.am/_ld/33/3335_Avetisyan_S.pdf
11. Մարկոսյան, Ա., & Պետրոսյան, Մ. (2010). ՀՀ պարենային անվտանգության արդի հիմնահարցերը. 21-րդ ԴԱՐ, (6(34)), 61. https://cyberleninka.ru/article/n/sovremennye-problemy-prodovolstvennoy-bezopasnosti/viewer
12. Վարդանյան, Ա., Եգանյան, Ռ., & այլոք. (2013). ՀՀ միգրացիոն իրավիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտության միջոցով (էջ 14). https://files4.webydo.com/45/452723/UploadedFiles/7926b382-53f6-4128-8dbb-cacc8e6a8ff9.pdf
13. ՀՀ Կառավարություն. (2023, հունիսի 29). Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը և 2023-2026թ. գործողությունների ծրագիրը հաստատելու մասին, N 1083-Լ. https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=179892
14. ՀՀ կառավարություն. (2024, փետրվարի 23). Զեկույց Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2023 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին, հավելված N 266-Ա (էջ 3). https://www.gov.am/files/docs/5659.pdf
15. Герасимчук, З. (2019). Теоретические основы продовольственной безопасности (стр. 163). ISSN 2312-5330. file:///C:/Users/User/Downloads/teoreticheskie-osnovy-prodovolstvennoy-bezopasnosti.pdf

16. Каррил-Качча, Ф., Паниагуа, Х., & Суарес-Варела, М. (2022). Вынужденная миграция и продовольственный кризис. https://www.suerf.org/publications/suerf-policy-notes-and-briefs/forced-migration-and-food-crises/
17. Ускова, Т. В., Селименков, Р. Ю., Анищенко, А. Н., & Чекавинский, А. Н. (2014). Продовольственная безопасность региона Вологда (стр. 5). ISBN 978-5-93299-258-6. http://library.vscc.ac.ru/Files/books/1401964240PRODOVOL_STVENNAY%20BEZOPASNOST_.PDF
18. Apanovich, M. (2020). Migration as a factor of the development: From the global openness to the local barriers. Contemporary Europe, 100(7), 124–131. https://doi.org/10.15211/soveurope72020124131
19. Holdoenko, A. M. (2024). Food supply and food security of the world's population in the conditions of changing world order: Management aspects. Administrative Consulting, 6, 196–202.
20. Loganden N. - FAO methodology for estimating the prevalence of undernourishment. https://www.fao.org/4/y4249e/y4249e06.htm
21. Ramirez, R. F., Vargas, P. L., & Cardenas, O. S. (2020). La seguridad alimentaria: una revisión sistemática con análisis no convencional (p. 320). https://revistaespacios.com/a20v41n45/a20v41n45p25.pdf Loganaden Naiken

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ՝ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՍՐՄԱՆ ՊԱՏՃԱՌ

ԼԻԱՆԱ ԱԶԱՏՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Համառոտագիր

Պարենային անվտանգությունը ցանկացած պետության ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչներից է, որը ուղղված է քաղաքացիների բավարար քանակությամբ և անհրաժեշտ որակի լիարժեք պարենով ապահովմանը և պետք է հասանելի լինի ցանկացած իրավիճակում: Պարենային անվտանգությունը հիմնականում ապահովվում է գյուղատնտեսության, սննդամթերքի արտադրության և սննդի ներմուծման համակարգերի զարգացման միջոցով: Հատկապես պետք է ուշադրություն դարձնել կենսական կարևոր նշանակություն ունեցող ապրանքների արտադրության ծավալների ավելացմանը: Միջազգային պրակտիկայում երկրների պարենային անվտանգության դիրքը գնահատվում է պարենային անվտանգության գլոբալ ինդեքսով, որը բաղկացած է 3 բաղադրիչից՝ պարենամթերքի մատչելիություն, հասանելիություն, որակ և անվտանգություն:

Պարենային անվտանգության ապահովումը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության կարևոր խնդիրներից է, քանի որ ՀՀ չունի ելք դեպի ծով, ունի արտաքին հաղորդակցության ուղիների սահմանափակումներ և բնակչության կեսից ավելին պարենային անապահովության վտանգի տակ է:

Հայաստանում արտաքին և ներքին միգրացիան իր բացասական ազդեցությունն է ունենում երկրի պարենային անվտանգության, սոցիալ-տնտեսական իրավիճակի, այդ թվում ագրարային ոլորտի վրա: Ներքին միգրացիայի արդյունքում ավելանում է անմշակ հողատարածությունների քանակը:

Խնդրի լուծման համար անհրաժեշտ է պարենի տեղական կայուն արտադրություն, սննդամթերքի պահուստների կարողությունների հզորացում և ապրանքների մատակարարման շղթաների արդյունավետության բարձրացում: Սույն խնդրի կարևորությամբ է պայմանավորված **թեմայի ընտրության արդիականությունը**:

Հոդվածի հիմնական **նպատակն** է ուսումնասիրել պարենային անվտանգության ներկա վիճակը և խնդրի վրա ազդող գործոնները.

- Ուսումնասիրվել է պարենային անվտանգության ապահովման հիմնական խնդիրները,
- Պարենային անվտանգության ապահովման վրա ազդող գործոնները,
- Ուսումնասիրության արդյունքում տրվել են եզրակացություններ և առաջարկություններ:

Բանալի բառեր. պարենային անվտանգությունը, գյուղատնտեսություն, ապրանքների արտադրություն, տեղական արտադրություն, սննդամթերքի ինքնաբավություն, ներքին միգրացիա:

МИРОВЫЕ ПОЛИТИЧЕСКИЕ СОБЫТИЯ КАК ПРИЧИНА РАСШИРЕНИЯ ПРОБЛЕМ СИСТЕМЫ ПРОДОВОЛЬСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ

ЛИАНА АЗАТЯН
ГАЯНЕ АВАГЯН

Аннотация

Продовольственная безопасность является одной из важнейших составляющих национальной безопасности любого государства, которая направлена на обеспечение граждан достаточным количеством и полноценным продовольствием необходимого качества, причем оно должно быть доступно в любой ситуации. Продовольственная безопасность обеспечивается в первую очередь за счет развития сельского хозяйства, производства продуктов питания и систем импорта продовольствия. Особое внимание следует уделить увеличению объемов производства жизненно важных товаров. В международной практике положение стран в области продовольственной безопасности оценивается с помощью Глобального

индекса продовольственной безопасности, который состоит из 3 компонентов: наличие продовольствия, доступность, качество и безопасность.

Обеспечение продовольственной безопасности является одним из важных вопросов национальной безопасности Республики Армения, поскольку Республика Армения не имеет выхода к морю, имеет ограничения на внешние коммуникационные пути, а более половины населения подвержено риску отсутствия продовольственной безопасности.

Внешняя и внутренняя миграция в Армении оказывает негативное воздействие на продовольственную безопасность страны, социально-экономическую ситуацию, в том числе и на аграрный сектор. В результате внутренней миграции увеличивается площадь необработанных земель.

Для решения этой проблемы необходимы устойчивое местное производство продовольствия, укрепление потенциала продовольственных резервов и повышение эффективности цепочек поставок продукции.

Актуальность выбора темы определяется важностью данной проблемы.

Основная цель статьи — изучение текущего состояния продовольственной безопасности и факторов, влияющих на эту проблему:

• Рассмотрены основные вопросы обеспечения продовольственной безопасности,

• Факторы, влияющие на обеспечение продовольственной безопасности,

• По результатам исследования даны выводы и рекомендации.

Ключевые слова: продовольственная безопасность, сельское хозяйство, товарное производство, местное производство, продовольственная самообеспеченность, внутренняя миграция.

GEOPOLITICAL DEVELOPMENTS AS A DRIVER OF THE INTENSIFICATION OF CHALLENGES IN THE FOOD SECURITY SYSTEM

LIANA AZATYAN
GAYANE AVAGYAN

Abstract

Food security is a fundamental component of national security, aimed at ensuring that the population has continuous access to sufficient quantities of safe, nutritious, and high-quality food under all circumstances. It is primarily achieved through the sustainable development of agriculture, food processing industries, and reliable food import systems. Particular emphasis should be placed on increasing the domestic production of essential food commodities. In international practice, a country's food security performance is commonly assessed using the Global Food Security Index, which is based on four core dimensions: food availability, accessibility, quality, and safety.

Ensuring food security is a critical national security priority for Armenia. As a landlocked country with limited external transport and trade routes, Armenia faces structural vulnerabilities in food supply. Moreover, more than half of the population is exposed to varying degrees of food insecurity, which further exacerbates the issue. Both external and internal migration have had adverse effects on Armenia's food security and broader socio-economic conditions, particularly within the agricultural sector. Internal migration from rural to urban areas has contributed to the expansion of uncultivated agricultural land, reducing domestic food production capacity and increasing dependence on imports.

Addressing these challenges requires the development of sustainable local food production systems, the strengthening of food reserve capacities, and improvements in the efficiency and resilience of commodity supply chains. The relevance of this research topic is determined by the strategic importance of food security for economic stability and national resilience. The aim of the article is to assess the current state of food security in Armenia and to identify the key factors influencing it. Specifically, the study:

- examines the principal challenges to ensuring food security,
- analyzes the factors affecting food security,
- formulates conclusions and policy-oriented recommendations based on the findings.

Keywords: food security, agriculture, commodity production, local production, food self-sufficiency, internal migration.